# Ֆինանսական միջնորդների շրջանակ (FIF) - Պորտֆելի ռիսկերի բաշխում (PRS) - ԱԿԲԱ բանկ (Կայուն զարգացման եվրոպական հիմնադրամ -EFSD+2)

**Երկիր -** Հայաստան
**Ծրագրի համար** - 55335
**Բիզնես ոլորտ** - Դեպոզիտային վարկ (բանկեր)
**Ծանուցման տեսակ** – անհատական
**Բնապահպանական կատեգորիա** - ՖՀ
**Հաստատման նախատեսված ամսաթիվ** - մայիսի 1, 2024թ.
**Կարգավիճակ**- հետազոտական
**Ծրագրի ամփոփ փաստաթղթի անգլերեն տարբերակի հրապարակման ամսաթիվ** – ապրիլի 11, 2024 թ.

## Ծրագրի Նկարագրություն

Պորտֆելի ռիսկերի բաշխումը (ՊՌԲ) մինչև 25 մլն եվրո չֆինանսավորվող երաշխիքի տեսքով տրամադրվում է Բանկի կողմից հօգուտ ԱԿԲԱ բանկի: Երաշխիքը ներառելու է վարկային ռիսկի մինչև 50%-ը համամասնական կարգով՝ ԱԿԲԱ բանկի կողմից ստեղծված ՄՓՄՁ վարկային նոր պորտֆելի հիման վրա:

## Ծրագրի նպատակները

Այս նախագիծը ՎԶԵԲ-ի կողմից Պորտֆելի ռիսկերի բաշխման պրոդուկտի առաջին փորձնական իրականացումն է Հայաստանում: Պրոդուկտը նպատակ ունի ազատել բանկին ռիսկերի պատասխանատվության գործառույթից՝ այդպիսով խթանելով ՓՄՁ-ների վարկավորումը և լրացնելով ՓՄՁ ֆինանսավորման պակասը շուկայում:

## Ազդեցությունն անցումային շրջանի վրա

Վաղ անցումային շրջանի վրա ազդեցության ցուցանիշը՝ 60

Ծրագրի անցումային ազդեցությունը բխում է Մրցունակ և ճկուն անցումային հատկանիշներից: Ծրագիրը ԱԿԲԱ-ին հնարավորություն կտա հետագայում ընդլայնել ՓՄՁ ոլորտի վարկավորման գործառնությունները Հայաստանում՝ այդ գործընթացն ազատելով ռիսկից:

## Հաճախորդի մասին տեղեկատվություն

ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ
ԱԿԲԱ բանկը ՎԶԵԲ-ի երկարաժամկետ գործընկերն է: Այն Հայաստանի 4-րդ խոշոր բանկն է ընդհանուր ակտիվների և համախառն վարկային պորտֆելի

առումով՝ 2023 թ.-ի դրությամբ 8.5% և 10.8% համապատասխան շուկայական մասնաբաժիններով:

## ՎԶԵԲ-ի կողմից տրամադրվող ֆինանսավորում

25,000,000.00 Եվրո

## Ծրագրի ընդհանուր արժեքը

50,000,000.00 Եվրո

## Բնապահպանական եվ սոցիալական ազդեցության ամփոփ նկարագիր

Դասակարգում՝ ՖՀ (Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն – ԲՍՔ 2019): ԱԿԲԱ բանկը հանդիսանում է ՎԶԵԲ-ի երկարաժամկետ հաճախորդը և ընթացիկ ծրագրերի կտրվածքով գոհացուցիչ ցուցանիշ է գրանցել կատարողականության ու տարեկան բնապահպանական և սոցիալական (ԲևՍ) հաշվետվությունների արդյունքներով: ԱԿԲԱ բանկից ակնկալվում է շարունակել համապատասխանելը Կատարողականության 2-րդ, 4-րդ և 9-րդ պահանջներին և ՎԶԵԲ-ի կորպորատիվ, ՓՄՁ և միկրո վարկերի բնապահպանական ու սոցիալական ընթացակարգերին, հետևել ՎԶԵԲ-ի բնապահպանական և սոցիալական բացառությունների ցանկին, ինչպես նաև (ESP) 2019-ով ներկայացվող հղումային ցուցակին և Բանկին ներկայացնել տարեկան ԲևՍ հաշվետվություններ: ԱԿԲԱ բանկի միջոցով ֆինանսավորում ստացող ենթավարկառուներից կպահանջվի համապատասխանել ազգային բնապահպանական, առողջապահական, անվտանգության և աշխատանքային անվտանգության պահանջներին:

## Տեխնիկական համագործակցություն

**Տեխնիկական համագործակցություն-** ՄՓՄՁ-ների համար մշակված կարողությունների զարգացում, հատկապես ագրո ՄՓՄՁ-ների համար՝ արտահանման շուկայում վերջիններիս ագրոբիզնեսի գծով պրակտիկ հմտությունների և կարողությունների կատարելագործման համար՝ Փոքր Բիզնեսի խորհրդատվական թիմի միջոցով:

**Ոչ տեխնիկական համագործակցություն-** Նախագիծը կօգտվի կայուն զարգացման եվրոպական հիմնադրամի (EFSD+) կողմից տրամադրվող առաջնային կորստի ռիսկի ծրագրից:

## Հավելյալություն

**Նորարար ֆինանսավորման կառուցվածքներ**- ՎԶԵԲ-ն առաջարկում է առևտրային պայմանների ֆինանսավորման նորարարական կառուցվածք, որը հասանելի չէ այլ բանկերի կողմից: Ծրագիրը կաջակցի նոր ռիսկերի բաշխման գործիքի մշակմանը՝ հիմնվելով պորտֆելի շրջանակում նոր տրամադրված ՓՄՁ վարկերի վրա:

**Գիտելիք, նորարարություն և կարողությունների զարգացում**- ՎԶԵԲ-ը տրամադրում է փորձ, նորարարություն, գիտելիք և կարողություններ, որոնք կարևոր են ծրագրի նպատակները ժամանակին իրագործելու համար, ինչպես նաև աջակցություն է տրամադրում հաճախորդի կարողությունների բարելավմանը՝ հետագա կառուցվածքային ֆինանսական ծրագրերում ընդգրկվելու նպատակով:

## Ընկերության կոնտակտային տվյալները

Անժելիկա Բաղրամյան
Anzhelika.Baghramyan@acba.am
Հեռ. +37410318888
www.acba.am
Հանրապետություն, Երևան 0002, Արամի փող. 82-84